

**ՀԱՎԵԼՎԱԾ 1**  
**ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՏԱՐԱԾՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ**

Սույն Համաձայնագրի տարածքի սահմանը հետևյալ տեսքն ունի՝ Հյուսիսային բևեռից 130°W երկայնքի գծով դեպի հարավ մինչև 75°N երկայնությունը. այնտեղից Վիսքոնսին Մելվիլ Սաունթ նեղուցով, Փրինս Ռիջընթ ծոցով, Բուֆա ծոցով, Ֆոքսի ավազանով, Ֆոքսի նեղուցով և Հուդզոնի նեղուցով դեպի արևելք և հարավ-արևելք մինչև հյուսիսարևմտյան Ատլանտիկայի 60°N, 60°W կետը. այնտեղից հյուսիսարևմտյան Ատլանտիկայով դեպի հարավ-արևելք մինչև 50°N, 30°W կետը. այնտեղից 30°W երկայնքի գծով դեպի հարավ մինչև 10°N երկայնությունը. այնտեղից դեպի հյուսիս-արևելք մինչև հասարակածի 20°W. այնտեղից 20°W երկայնքով դեպի հարավ մինչև 40°S. այնտեղից 40°S երկայնությունով դեպի արևելք մինչև 60°E. այնտեղից 60°E երկայնքի գծով դեպի հյուսիս մինչև 35°N երկայնությունը. այնտեղից մեծ շրջագծով դեպի արևելք-հյուսիս-արևելք մինչև արևմտյան Ալտայի 49°N, 87°27'E կետը. այնտեղից մեծ շրջագծով դեպի հյուսիս-արևելք մինչև Հյուսիսային օվկիանոսի ափի 130°E. այնտեղից 130°E երկայնքով դեպի հյուսիս մինչև Հյուսիսային բևեռ: Համաձայնագրի գործողության սխեման բերված է հետևյալ քարտեզում՝

**ՀԱՎԵԼՎԱԾ 2**  
**Ջրային թռչունների ՏԵՍԱԿՆԵՐԸ, որոնց նկատմամբ կիրառվում է**  
**Համաձայնագիրը<sup>1</sup>**

SPHENISCIDAE

Spheniscus demersus                      Աֆրիկյան պինգվին

GAVIIDAE

Gavia adamsii                              Սպիտակակտուց սուզաբադ  
Gavia arctica                              Սևխաձի սուզաբադ  
Gavia immer                              Սովորական սուզաբադ  
Gavia stellata                              Կարմրախաձի սուզաբադ

PODICIPEDIDAE

Podiceps auritus                          Կարմրավիզ սուզակ  
Podiceps cristatus                      Մեծ սուզակ  
Podiceps grisegena                      Մոխրայտ սուզակ  
Podiceps nigricollis                      Սևավիզ սուզակ  
Tachybaptus ruficollis                      Փոքր սուզակ

PELECANIDAE

Pelecanus crispus                          Գանգրափետուր հավալուսն  
Pelecanus onocrotalus                      Վարդագույն հավալուսն  
Pelecanus rufescens                          Վարդագունամեջք հավալուսն

SULIDAE

Morus capensis                          Հարավաֆրիկյան գանեթ

PHALACROCORACIDAE

Phalacrocorax capensis                      Հարավաֆրիկյան ձկնկուլ

---

<i>Phalacrocorax carbo</i>	Մեծ ձկնկույ
<i>Phalacrocorax coronatus</i>	Պսակավոր ձկնկույ
<i>Phalacrocorax neglectus</i>	Գետափնյա ձկնկույ
<i>Phalacrocorax nigrogularis</i>	Սոկոտրյան ձկնկույ
<i>Phalacrocorax pygmeus</i>	Փոքր ձկնկույ

#### ARDEIDAE

<i>Ardea cinerea</i>	Մոխրագույն տառեղ
<i>Ardea melanocephala</i>	Սևագլուխ տառեղ
<i>Ardea purpurea</i>	Շիկակարմիր տառեղ
<i>Ardeola idae</i>	Մադագասկարյան տառեղ
<i>Ardeola ralloides</i>	Դեղին տառեղ
<i>Ardeola rufiventris</i>	Շիկակարմրափոր տառեղ
<i>Botaurus stellaris</i>	Մեծ ջրցույ
<i>Bubulcus ibis</i>	Եգիպտական տառեղ
<i>Casmerodius albus</i>	Սպիտակ մեծ տառեղ
<i>Egretta ardesiaca</i>	Սև տառեղ
<i>Egretta dimorpha</i>	Երկձև տառեղ
<i>Egretta garzetta</i>	Սպիտակ փոքր տառեղ
<i>Egretta gularis</i>	Արևմտյան խութային տառեղ
<i>Egretta vinaceigula</i>	Շերթաքարագույն տառեղ
<i>Ixobrychus minutus</i>	Փոքր ջրցույ
<i>Ixobrychus sturmii</i>	Թզուկ ջրցույ
<i>Mesophoyx intermedia</i>	Միջին տառեղ
<i>Nycticorax nycticorax</i>	Կվակվա

#### BALAENICIPITIDAE

<i>Balaeniceps rex</i>	Կոշկակտուց արագիլ
------------------------	-------------------

#### CICONIIDAE

<i>Anastomus lamelligerus</i>	Աֆրիկյան բերանբաց արագիլ
<i>Ciconia abdimii</i>	Աբդիմի արագիլ
<i>Ciconia ciconia</i>	Սպիտակ արագիլ
<i>Ciconia episcopus</i>	Բրդոտավիզ արագիլ
<i>Ciconia nigra</i>	Սև արագիլ
<i>Leptoptilos crumeniferus</i>	Մարաբու
<i>Mycteria ibis</i>	Դեղնակտուց արագիլ

## THRESKIORNITHIDAE

Geronticus eremita	Ճաղատ իբիս
Platalea alba	Աֆրիկյան տարգալակտուց
Platalea leucorodia	Եվրոպական տարգալակտուց
Plegadis falcinellus	Քաջահավ
Threskiornis aethiopicus	Սուրբ իբիս

## PHOENICOPTERIDAE

Phoenicopus minor	Փոքր ֆլամինգո
Phoenicopus ruber	Սովորական ֆլամինգո

## ANATIDAE

Alopochen aegyptiacus	Եգիպտական սագ
Anas acuta	Նետապոչ բադ
Anas capensis	Հարավաֆրիկյան մրտիմն
Anas clypeata	Լայնակտուց բադ
Anas crecca	Սուլող մրտիմն
Anas erythrorhyncha	Կարմրակտուց բադ
Anas hottentota	Հոտենտոտյան մրտիմն
Anas penelope	Շչան բադ
Anas platyrhynchos	Կոնչան բադ
Anas querquedula	Ճքճքան մրտիմն
Anas strepera	Մոխրագույն բադ
Anas undulata	Դեղնակտուց բադ
Anser albifrons	Սպիտակաճակատ սագ
Anser anser	Մոխրագույն սագ
Anser brachyrhynchus	Վարդագունատ սագ
Anser erythropus	Ծվվան սագ
Anser fabalis	Բակլասագ
Aythya ferina	Կարմրագլուխ սուզաբադ
Aythya fuligula	Փուփուլավոր սուզաբադ
Aythya marila	Մեծ սուզաբադ
Aythya nyroca	Սպիտակաաչք սուզաբադ
Branta bernicla	Սև սագ
Branta leucopsis	Սպիտակաայտ սագ
Branta ruficollis	Կարմրախաճի սագ

<i>Bucephala clangula</i>	Սոնաբադ
<i>Clangula hyemalis</i>	Ծովաբադ
<i>Cygnus columbianus</i>	Փոքր կարապ
<i>Cygnus cygnus</i>	Ճչան կարապ
<i>Cygnus olor</i>	Թշշան կարապ
<i>Dendrocygna bicolor</i>	Գորշ ծառի բադ
<i>Dendrocygna viduata</i>	Սպիտակերես ծառի բադ
<i>Marmaronetta angustirostris</i>	Մարմարյա մրտիմն
<i>Melanitta fusca</i>	Տուրպան
<i>Melanitta nigra</i>	Սև տուրպան
<i>Mergellus albellus</i>	Լուտոկ
<i>Mergus merganser</i>	Մեծ սղոցակտուց բադ
<i>Mergus serrator</i>	Սղոցակտուց բադ
<i>Netta erythrophthalma</i>	Հարավային սուզաբադ
<i>Netta rufina</i>	Կարմրակտուց սուզաբադ
<i>Nettapus auritus</i>	Աֆրիկյան թզուկ սագ
<i>Oxyura leucocephala</i>	Սպիտակագլուխ բադ
<i>Oxyura maccoa</i>	Մակկո բադ
<i>Plectropterus gambensis</i>	Իթանաթև սագ
<i>Polysticta stelleri</i>	Ստելլերի այդերուկ
<i>Sarkidiornis melanotos</i>	Պալարակտուց այդերուկ
<i>Somateria mollissima</i>	Այդերուկ
<i>Somateria spectabilis</i>	Ակնոցավոր այդերուկ
<i>Tadorna cana</i>	Հարավաֆրիկյան խայտաբադ
<i>Tadorna ferruginea</i>	Կարմիր բադ
<i>Tadorna tadorna</i>	Խայտաբադ
<i>Thalassornis leucanotus</i>	Սպիտակամեջք բադ

#### GRUIDAE

<i>Balearica pavonina</i>	Սև պսակավոր կռունկ
<i>Balearica regulorum</i>	Մոխրագույն պսակավոր կռունկ
<i>Grus carunculatus</i>	Հյուսկեն կռունկ
<i>Grus grus</i>	Մոխրագույն կռունկ
<i>Grus leucogeranus</i>	Սիբիրյան կռունկ
<i>Grus paradisea</i>	Կապույտ կռունկ
<i>Grus virgo</i>	Գեղանի կռունկ

#### RALLIDAE

<i>Aenigmatolimnas marginalis</i>	Զոլավոր ճահճահովվիկ
<i>Amaurornis flavirostra</i>	Սև ճահճահովվիկ
<i>Crecopsis egregia</i>	Աֆրիկյան ճահճահովվիկ
<i>Crex crex</i>	Մարգահավ
<i>Fulica atra</i>	Սև փարփար
<i>Fulica cristata</i>	Փուփուլավոր փարփար
<i>Gallinula angulata</i>	Փոքր եղեգնահավ
<i>Gallinula chloropus</i>	Եղեգնահավ
<i>Porphyrio alleni</i>	Ալլենի սուլթանական հավ
<i>Porzana parva</i>	Ճահճահովվիկ
<i>Porzana porzana</i>	Մեծ ճահճահովվիկ
<i>Porzana pusilla</i>	Գանճ ճահճահովվիկ
<i>Rallus aquaticus</i>	Ջրահովվիկ
<i>Rallus caerulescens</i>	Կաֆրական ջրահովվիկ
<i>Sarothrura ayresi</i>	Սպիտակաթև բմբուլապոչ
<i>Sarothrura boehmi</i>	Զոլադոչ բմբուլապոչ
<i>Sarothrura elegans</i>	Դեղնաբիծ բմբուլապոչ

#### DROMADIDAE

<i>Dromas ardeola</i>	Խեցգետնակեր պինդիրա
-----------------------	---------------------

#### HAEMATOPODIDAE

<i>Haematopus moquini</i>	Սև կոցար կաչաղակ
<i>Haematopus ostralegus</i>	Կոցար կաչաղակ

#### RECURVIROSTRIDAE

<i>Himantopus himantopus</i>	Ոտնացուպիկ
<i>Recurvirostra avosetta</i>	Բզակտուց

#### BURHINIDAE

<i>Burhinus senegalensis</i>	Սենեգալյան հաստածունկ
------------------------------	-----------------------

## GLAREOLIDAE

<i>Glareola cinerea</i>	Մոխրագույն ծիխառակտցար
<i>Glareola nordmanni</i>	Տափաստանային ծիխառակտցար
<i>Glareola nuchalis</i>	Ժայռային ծիխառակտցար
<i>Glareola ocularis</i>	Մադագասկարյան ծիխառակտցար
<i>Glareola pratincola</i>	Մարգագետնային ծիխառակտցար
<i>Pluvianus aegyptius</i>	Եգիպտական քարադր

## CHARADRIIDAE

<i>Charadrius alexandrinus</i>	Ծովային քարադր
<i>Charadrius asiaticus</i>	Կասպիական քարադր
<i>Charadrius dubius</i>	Փոքր քարադր
<i>Charadrius forbesi</i>	Ֆորբեսի քարադր
<i>Charadrius hiaticula</i>	Փողկապավոր քարադր
<i>Charadrius leschenaultii</i>	Հաստակտուց քարադր
<i>Charadrius marginatus</i>	Սպիտակաճակատ քարադր
<i>Charadrius mongolus</i>	Մոնղոլական քարադր
<i>Charadrius pallidus</i>	Շականակաօղ քարադր
<i>Charadrius pecuarius</i>	Կիտլիցի քարադր
<i>Charadrius tricollaris</i>	Եռօղանի քարադր
<i>Eudromias morinellus</i>	Եվրասիական պինդիրա
<i>Pluvialis apricaria</i>	Ոսկեփայլ քարադր
<i>Pluvialis fulva</i>	Խաղաղօվկիանոսյան ոսկեփայլ քարադր
<i>Pluvialis squatarola</i>	Մոխրագույն քարադր
<i>Vanellus albiceps</i>	Սպիտակագլուխ կիվիվ
<i>Vanellus coronatus</i>	Փուփուլավոր կիվիվ
<i>Vanellus gregarius</i>	Ճախրուկ
<i>Vanellus leucurus</i>	Սպիտակապոչ եղտյուրիկ
<i>Vanellus lugubris</i>	Սգավոր կիվիվ
<i>Vanellus melanopterus</i>	Սևաթև կիվիվ
<i>Vanellus senegallus</i>	Սենեգալյան կիվիվ
<i>Vanellus spinosus</i>	Թևաբտիկ կիվիվ
<i>Vanellus superciliosus</i>	Շագանակակուրծք կիվիվ
<i>Vanellus vanellus</i>	Հյուսիսային կիվիվ

## SCOLOPACIDAE

<i>Arenaria interpres</i>	Քարաքուջուջ
<i>Calidris alba</i>	Ճերմակ ավազակտցար
<i>Calidris alpina</i>	Սևախաճի ավազակտցար
<i>Calidris canutus</i>	Կարմիր ավազակտցար
<i>Calidris ferruginea</i>	Կարմրախաճի ավազակտցար
<i>Calidris maritima</i>	Ծիրանագույն ավազակտցար
<i>Calidris minuta</i>	Ճնճղուկ ավազակտցար
<i>Calidris temminckii</i>	Սպիտակապոչ ավազակտցար
<i>Calidris tenuirostris</i>	Մեծ ավազակտցար
<i>Gallinago gallinago</i>	Մորակտցար
<i>Gallinago media</i>	Կրկնակտցար
<i>Gallinago stenura</i>	Նետապոչ մորակտցար
<i>Limicola falcinellus</i>	Տիղմակտցար
<i>Limosa lapponica</i>	Փոքր իլիկակտցար
<i>Limosa limosa</i>	Մեծ իլիկակտցար
<i>Lymnocyptes minimus</i>	Վարսակտցար
<i>Numenius arquata</i>	Մեծ արորիկ
<i>Numenius phaeopus</i>	Միջին արորիկ
<i>Numenius tenuirostris</i>	Նրբակտուց արորիկ
<i>Phalaropus fulicaria</i>	Մոխրագույն լողակտցար
<i>Phalaropus lobatus</i>	Կլորաքիթ լողակտցար
<i>Philomachus pugnax</i>	Կռվակտցար
<i>Scolopax rusticola</i>	Անտառակտցար
<i>Tringa cinerea</i>	Թերեքի կտցար
<i>Tringa erythropus</i>	Պտավոր կտցար
<i>Tringa glareola</i>	Ֆիֆի
<i>Tringa hypoleucos</i>	Սպիտակավիզ կտցար
<i>Tringa nebularia</i>	Ծխագույն կտցար
<i>Tringa ochropus</i>	Սևուկ կտցար
<i>Tringa stagnatilis</i>	Առաձնյա կտցար
<i>Tringa totanus</i>	Կարմրատու կտցար

## LARIDAE

<i>Chlidonias hybridus</i>	Սպիտակապյտ ջրածիճառ
<i>Chlidonias leucopterus</i>	Սպիտակաթև ջրածիճառ



Chlidonias niger	Սև ջրածիծառ
Larus argentatus	Արծաթափայլ որոր
Larus armenicus	Հայկական որոր
Larus audouinii	Օդյուբոնի որոր
Larus cachinnans	Քրքջան որոր
Larus canus	Թխակապույտ որոր
Larus cirrocephalus	Ծխագլուխ որոր
Larus dominicanus	Դոմինիկյան որոր
Larus fuscus	Փոքր ծովաորոր
Larus genei	Ծովային աղավնաորոր
Larus glaucoides	Փոքր բևեռային որոր
Larus hartlaubii	Թագավորական որոր
Larus hemprichii	Մոխրոտ որոր
Larus heuglini	Հոգլինի որոր
Larus hyperboreus	Մեծ բևեռային որոր
Larus ichthyaetus	Սևագլուխ քրքջան
Larus leucophthalmus	Սպիտակաաչք որոր
Larus marinus	Մեծ սևամեջք որոր
Larus melanocephalus	Սևագլուխ որոր
Larus minutus	Փոքր որոր
Larus ridibundus	Սովորական որոր
Sterna albifrons	Փոքր ջրածիծառ
Sterna balaenarum	Դամարայի ջրածիծառ
Sterna bengalensis	Բենգալյան ջրածիծառ
Sterna bergii	Փոքր փուփուլավոր ջրածիծառ
Sterna caspia	Կասպիական ծովածիծառ
Sterna dougallii	Վարդագույն ջրածիծառ
Sterna hirundo	Գետային ջրածիծառ
Sterna maxima	Արքայական ծովածիծառ
Sterna nilotica	Որորակտուց ջրածիծառ
Sterna paradisaea	Արկտիկական ջրածիծառ
Sterna repressa	Սպիտակաայտ ջրածիծառ
Sterna sandvicensis	Սենդվիչյան ջրածիծառ
Sterna saundersi	Սոնդերսի ջրածիծառ
Sterna vittata	Անտարկտիկական ջրածիծառ
Xema sabini	Մտրակապոչ որոր

RYNCHOPIDAE

*Rynchops flavirostris*

Աֆրիկյան դանակակտուց

## Հավելված 3

### ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ<sup>2</sup>

#### 1. Կիրառման ոլորտը

1.1. Գործողության ծրագիրը կիրառվում է սույն հավելվածի Աղյուսակում 1-ում (այսուհետ՝ «Աղյուսակ 1») թվարկված միգրացվող ջրային թռչունների պոպուլյացիաների նկատմամբ:

1.2. Աղյուսակ 1-ը կազմում է սույն հավելվածի անբաժանելի մասը: Ցանկացած հղում սույն Գործողության ծրագրին ներառում է հղում Աղյուսակ 1-ին:

#### 2. Տեսակների պահպանությունը

##### 2.1. Իրավական միջոցները

2.1.1. Աղյուսակ 1-ի Ա սյունակում թվարկված պոպուլյացիաներ ունեցող Կողմերը պետք է ապահովեն այդ պոպուլյացիաների պահպանությունը համաձայն սույն Համաձայնագրի III հոդվածի 2(ա) կետի: Այդպիսի Կողմերը պետք է, մասնավորապես և պահպանելով ստորև նշված 2.1.3. կետի դրույթները,

ա) արգելեն իրենց տարածքներում հանդիպող այդ պոպուլյացիաների թռչունների և ձվերի հավաքը,

բ) արգելեն կանխամտածված անհանգստացումը այնքանով, որքանով անհանգստացումը էական կլինի տվյալ պոպուլյացիայի պահպանության համար, և

գ) արգելեն այն պոպուլյացիաների թռչունների կամ ձվերի տնօրինումը, օգտագործումը և վաճառքը, որոնք հավաքվել են վերը նշված (ա) ենթապարբերությունում նշված արգելքների խախտմամբ, ինչպես նաև այդ թռչունների և ձվերի ճանաչելի մասերի կամ արգասիքների տնօրինումը կամ օգտագործումը և առևտուրը:

Բացառությամբ Ա սյունակի 2 և 3 կարգերում թվարկված և աստղանիշով նշված պոպուլյացիաների և Ա սյունակի 4 կարգում թվարկված պոպուլյացիաների որսը կարող է շարունակվել կայուն օգտագործման հիմքերի վրա<sup>3</sup>: Այդպիսի կայուն օգտագործումը պետք է իրականացվի՝ համապատասխան միջազգային մակարդակում տեսակների մասով գործողության ծրագրի վերաբերյալ հատուկ դրույթների շրջանակներում<sup>4</sup>: Այդպիսի օգտագործումը պետք է առնվազն

---

<sup>2</sup> Գործողության ծրագրի մասին հավելվածի 1-ին հոդվածի 1-րդ կետի դրույթները:

կարգավորվի նույն իրավական միջոցներով ինչ Աղյուսակ 1-ի Բ սյունակում թվարկված պոպուլյացիաների թռչունների որսը, ինչպես պահանջվում է ներքոհիշյալ 2.1.2. կետում:

2.1.2. Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաներ ունեցող Կողմերը պետք է կանոնակարգեն Բ սյունակում թվարկված թռչունների և ձվերի հավաքը: Այդպիսի իրավական միջոցների նպատակն է պահպանել կամ նպաստել այդ պոպուլյացիաների բարենպաստ պահպանության կարգավիճակի վերականգնմանը և պոպուլյացիայի դինամիկայի վերաբերյալ առկա լավագույն գիտելիքների հիման վրա երաշխավորել հավաքի կամ այլ օգտագործման կայունությունը: Այդպիսի իրավական միջոցները, պահպանելով ստորև նշված 2.1.3. կետի դրույթները, պետք է՝

ա) արգելեն տվյալ պոպուլյացիաների թռչունների որսը բազմացման և աճեցման տարբեր փուլերում և բազմացման տարածքներ վերադառնալու շրջանում, եթե որսը ունի անբարենպաստ ազդեցություն տվյալ պոպուլյացիայի պահպանության կարգավիճակի վրա,

բ) կարգավորեն հավաքի ձևերը,

գ) սահմանափակեն, անհրաժեշտության դեպքում, հավաքի չափաքանակները և ապահովեն համապատասխան հսկողություն, որպեսզի երաշխավորեն, որ այդ սահմանափակումները պահպանվեն, և

դ) արգելեն այն պոպուլյացիաների թռչունների և ձվերի տնօրինումը կամ օգտագործումն ու առևտուրը, որոնք հավաքվում են սույն պարբերությունում սահմանված արգելքի խախտմամբ, ինչպես նաև այդ թռչունների և ձվերի ճանաչելի մասերի կամ արգասիքների տնօրինումը կամ օգտագործումն ու առևտուրը:

2.1.3. Կողմերի համար կարող են չկիրառվել 2.1.1. և 2.1.2. կետերում նշված արգելքները, անկախ Կոնվենցիայի III հոդվածի 5 կետից, եթե չկա որևէ այլ բավարար լուծում, հետևյալ նպատակների համար՝

ա) ցանքերին, ջրերին կամ ձկնորսությանը լուրջ վնասը կանխարգելելու համար,

բ) ելնելով օդային անվտանգության և այլ առաջնահերթ հանրային շահերից,

գ) գիտական և ուսումնական նպատակների, կամ այդ նպատակների համար վերականգնման կամ բուժման,

դ) խիստ վերահսկողության ներքո, սելեկտիվ հիմունքների վրա, որոշ թռչունների փոքրաքանակ և սահմանափակ հավաքը, պահելը կամ այլ ողջամիտ օգտագործումը թույլատրելու, և

ե) համապատասխան պոպուլյացիաների բազմացումը և գոյատևումը խթանելու համար:

Այդպիսի բացառությունները պետք է լինեն ստույգ իրենց էությամբ և սահմանափակ տարածքով և ժամանակով և չպետք է գործեն ի վնաս Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաներին:

## 2.2. Եզակի տեսակների մասով գործողության ծրագրերը

2.2.1. Կողմերը պետք է համագործակցեն՝ նպատակ ունենալով մշակել և իրագործել Աղյուսակ 1-ի Ա սյունակի 1-ին կարգում թվարկված պոպուլյացիաների համար եզակի տեսակների մասով գործողության ծրագրեր՝ որպես առաջնահերթություն, ինչպես նաև Աղյուսակ 1-ի Ա սյունակում աստղանիշով նշված պոպուլյացիաներին: Համաձայնագրի քարտուղարությունը պետք է համակարգի այդպիսի պլաների զարգացումը, ներդաշնակեցումը և իրականացումը:

2.2.2. Կողմերը պետք է նախապատրաստեն և իրագործեն Աղյուսակ 1-ի Ա սյունակի 1-ին կարգում թվարկված պոպուլյացիաների եզակի տեսակների մասով գործողության ծրագրեր՝ նպատակ ունենալով բարելավել նրանց ընդհանուր պահպանության կարգավիճակը: Այս գործողության ծրագիրը պետք է ներառի հատուկ նախապայմաններ աստղանիշով նշված պոպուլյացիաների համար: Անհրաժեշտության դեպքում, պետք է հաշվի առնվի որսորդների կողմից տեսակի սխալ նույնականացման հետևանքով թռչունների պատահական սպանության խնդիրը:

## 2.3. Արտակարգ միջոցառումները

Կողմերը պետք է հնարավորության և նպատակահարմարության դեպքերում միմյանց հետ համագործակցելով մշակեն և իրագործեն արտակարգ միջոցառումներ Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների համար, երբ Համաձայնագրի տարածքի որևէ մասում առանձնահատուկ անբարենպաստ կամ վտանգոլ պայմաններ են դիտարկվում:

## 2.4. Վերականգնումները

Կողմերը պետք է մեծագույն զգոնություն ցուցաբերեն Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաներն իրենց պատմական ապրելավայրերում, ուր դրանք արդեն չեն հանդիպում, վերականգնելու ժամանակ: Նրանք պետք է ձգտեն մշակել և հետևել համապատասխան գիտական ուսումնասիրությունների վրա հիմնավորված վերականգնման համառոտ ծրագրերին: Վերականգնման ծրագրերը պետք է կազմեն եզակի տեսակների մասով գործողությունների ազգային և, անհրաժեշտության դեպքում, միջազգային ծրագրերի ամբողջական մասը: Վերականգնման ծրագիրը պետք է ներառի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և պետք է հանրությանը հասանելի լինի: Կողմերը պետք է նախապես տեղեկացնեն Համաձայնագրի քարտուղարությանը Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների վերականգնման բոլոր ծրագրերի մասին:

## 2.5. Ներմուծումները

2.5.1. Կողմերը պետք է, եթե դա անհրաժեշտ են համարում, արգելեն այլ տարածքներում բնակվող բույսերի և կենդանիների այն տեսակների ներմուծումները, որոնք կարող են վնասակար լինել Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների համար:

2.5.2. Կողմերը պետք է, եթե դա անհրաժեշտ են համարում, պահանջեն համապատասխան նախազգուշական միջոցների կիրառում, որպեսզի խուսափեն այլ տարածքներում բնակվող տեսակներին պատկանող թռչունների պատահական ազատ արձակումից:

2.5.3. Կողմերը պետք է, իրագործելիության և նպատակահարմարության սահմաններում, ձեռնարկեն միջոցներ՝ ներառյալ հավաքը, որպեսզի ապահովեն, որ իրենց տարածքներ արդեն իսկ ներմուծված՝ այլ տարածքներում բնակվող տեսակները կամ դրանց խառնածինները չհանդիսանան հավանական վնասի աղբյուր Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների համար:

## 3. Բնակավայրի պահպանությունը

### 3.1. Բնակավայրի գույքագրումներ

3.1.1. Անհրաժեշտության դեպքում Կողմերը միջազգային կազմակերպությունների հետ համատեղ պետք է նախաձեռնեն և հրապարակեն իրենց տարածքներում գտնվող Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների համար կարևոր բնակավայրերի ազգային գույքագրումները:

3.1.2. Որպես առաջնահերթ խնդիր՝ Կողմերը պետք է ձգտեն որոշել Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների համար միջազգային և ազգային կարևորություն ունեցող բոլոր բնակավայրերը:

### 3.2. Տարածքների պահպանությունը

3.2.1. Կողմերը պետք է ձգտեն շարունակել հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների կարևոր բնակավայրերի պահպանության համար և մշակեն ու իրականացնեն այդ տարածքների կառավարման պլանները:

3.2.2. Կողմերը պետք է ձգտեն տալ հատուկ պահպանության կարգավիճակ այն խոնավ տարածքներին, որոնք համապատասխանում են միջազգային կարևորության ընդունված չափորոշիչներին:

3.2.3. Կողմերը պետք է ձգտեն իրականացնել իրենց երկրի բոլոր խոնավ տարածքների խոհեմ և կայուն օգտագործումը: Մասնավորապես, նրանք պետք է ձգտեն խուսափել Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաներին աջակցող բնակավայրերի վատթարացումից և կորստից՝ համապատասխան կանոնների կամ ստանդարտների կիրառման և հսկողության միջոցների շնորհիվ: Մասնավորապես, նրանք պետք է ձգտեն.

ա) երաշխավորել, որտեղ կիրառելի է, որ գյուղատնտեսական քիմիկատների, թունաքիմիկատների օգտագործման և կեղտաջրերի հեռացման վերաբերյալ կիրառվեն օրենքով սահմանված անհրաժեշտ հսկողությունների լծակներ, որոնք համապատասխանում են միջազգային չափանիշներին և նպատակ ունեն նվազեցնել դրանց անբարենպաստ ազդեցությունը Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների վրա. և

բ) նախապատրաստել և տարածել իրականացվող կանոնները կամ ստանդարտները և հսկողության միջոցները և այդ միջոցներից բխող մարդկանց ու բնության շահերը նկարագրող համապատասխան լեզուներով տեղեկատվական նյութեր:

3.2.4. Հիմնվելով էկոհամակարգային մոտեցման վրա՝ Կողմերը պետք է ձգտեն մշակել ռազմավարություն Աղյուսակ 1-ում թվարկված բոլոր պոպուլյացիաների բնակավայրերի պահպանության համար՝ ներառյալ տարաբաժանված պոպուլյացիաների բնակավայրերը:

### 3.3. Վերահաստատումը և վերականգնումը

Կողմերը պետք է ձգտեն վերահաստատել և վերականգնել, իրագործելիության և անհրաժեշտության սահմաններում, այն տարածքները, որոնք նախկինում կարևոր էին Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների համար:

## 4. Մարդու գործունեության կառավարումը

### 4.1. Որսորդություն

4.1.1. Կողմերը պետք է համագործակցեն, որպեսզի երաշխավորեն, որ որսորդությանը վերաբերող նրանց օրենսդրությամբ իրագործվի կայուն օգտագործման սկզբունքը, ինչպես դա նախատեսվում է այս Գործողության ծրագրով՝ հաշվի առնելով համապատասխան ջրային թռչունների պոպուլյացիաների աշխարհագրական տարածվածությունը և դրանց կյանքի ցիկլի հատկությունները:

4.1.2. Կողմերը պետք է տեղեկացված պահեն Համաձայնագրի քարտուղարությանը Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների որսին վերաբերող իրենց օրենսդրության մասին:

4.1.3. Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների տարեկան հավաքը գնահատելու համար Կողմերը պետք է համագործակցեն՝ նպատակ ունենալով մշակել հավաքի տվյալների հավաքագրման համար վստահելի և ներդաշնակեցված համակարգ: Հնարավորության դեպքում, նրանք պետք է տրամադրեն Համաձայնագրի քարտուղարությանը յուրաքանչյուր պոպուլյացիայի համար ընդհանուր տարեկան հավաքի տվյալները:

4.1.4. Կողմերը պետք է ձգտեն նվազեցնել խոնավ տարածքներում որսի նպատակով կապարի կոտորակի օգտագործումը հնարավորինս արագ՝ իրենց կողմից սահմանված և հրապարակված ժամանակացույցին համապատասխան:

4.1.5.

4.1.6. Կողմերը պետք է մշակեն և ձեռնարկեն միջոցներ՝ անօրինական հավաքը նվազեցնելու և հնարավորության սահմաններում վերացնելու համար:

4.1.7. Անհրաժեշտության դեպքում, Կողմերը պետք է խրախուսեն որսորդներին ստեղծել ակումբներ կամ կազմակերպություններ տեղական, ազգային և միջազգային մակարդակով՝ իրենց գործողությունները համակարգելու և կայունության ապահովմանն օժանդակելու նպատակով:

4.1.8. Կողմերը պետք է, անհրաժեշտության դեպքում, իրականացնեն որսորդների պատրաստականության ստուգումներ՝ այլ առարկաների թվում ներառելով նաև թռչունների նույնականացումը:

## 4.2. Էկոտուրիզմը

4.2.1. Կողմերը պետք է, անհրաժեշտության դեպքում, սակայն ոչ պահպանվող տարածքների հիմնական գոտում, խրախուսեն բոլոր շահագրգռված կողմերի համատեղ ծրագրերի անցկացումը, որպեսզի համապատասխան տպավորիչ և յուրահատուկ էկոտուրիզմ զարգացնեն Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների կուտակման խոնավ տարածքներում:

4.2.2. Կողմերը պետք է, համագործակցելով իրավասու միջազգային կազմակերպությունների հետ, ձգտեն գնահատել այն ծախսերը, օգուտներն ու այլ հետևանքներ, որոնք կարող են առաջանալ Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների կուտակման ընտրված խոնավ տարածքներում էկոտուրիզմից:



Նրանք պետք է տեղեկացնեն Համաձայնագրի քարտուղարությանը նման գնահատման արդյունքների մասին:

#### 4.3. Մարդկային այլ գործունեություն

4.3.1. Կողմերը պետք է գնահատեն այն առաջարկվող ծրագրերի ազդեցությունը, որոնք կարող են բերել բախմանը 3.2. պարբերությունում նշված տարածքներում գտնվող՝ Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների և մարդկային շահերի միջև, և այդ գնահատման արդյունքները պետք է հասանելի դարձվեն հասարակությանը:

4.3.2. Կողմերը պետք է ձգտեն հավաքել տեղեկատվություն Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների կողմից հասցված վնասի, մասնավորապես ցանքերին և ձկնորսությանը, և արդյունքների մասին զեկուցեն Համաձայնագրի քարտուղարությանը:

4.3.3. Կողմերը պետք է համագործակցեն՝ նպատակ ունենալով նախանշել անհրաժեշտ եղանակներ՝ Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների կողմից՝ մասնավորապես ցանքերին և ձկնորսությանը հասցված վնասի ազդեցությունը նվազագույնի հասցնելու կամ մեղմացնելու համար՝ օգտագործելով աշխարհում որևէ այլ տեղ ստացած փորձը:

4.3.4. Կողմերը պետք է համագործակցեն՝ նպատակ ունենալով մշակել գործողությունների ծրագրեր այն եզակի տեսակների համար, որոնց պոպուլյացիաները նշանակալի վնաս են հասցնում մասնավորապես ցանքերին և ձկնորսությանը: Համաձայնագրի քարտուղարությունը պետք է համակարգի այդպիսի ծրագրերի մշակումը և ներդաշնակեցումը:

4.3.5. Կողմերը պետք է հնարավորինս աջակցեն կառույցների նախագծման և շինարարության բարձր բնապահպանական ստանդարտներին՝ նվազագույնի հասցնելու դրանց ազդեցությունը Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների վրա: Նրանք պետք է մշակեն քայլեր՝ նվազագույնի հասցնելու արդեն իսկ գործող կառույցների ազդեցությունը, երբ ակնհայտ է դառնում, որ դրանք բացասական ազդեցություն են թողնում համապատասխան պոպուլյացիաների վրա:

4.3.6. Այն դեպքերում, երբ մարդկանց կողմից անհանգստություն պատճառելը վտանգում է Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների պահպանության կարգավիճակին, Կողմերը պետք է ձգտեն միջոցներ ձեռնարկել՝ վտանգի աստիճանը սահմանափակելու համար: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել մարդկանց կողմից անհանգստություն պատճառելու այն խնդրին, երբ նրանք կերակրում են խմբերով բնադրվող ջրային թռչունների խմբերին, հատկապես

երբ դրանք գտնվում են այնպիսի տարածքներում, որոնք հայտնի են բաց երկնքի տակ հանգստի համար: Համապատասխան միջոցները կարող են ներառել բնության հատուկ պահպանվող տարածքներում անհանգստությունից զերծ այնպիսի տարածքների ստեղծում, ուր հասարակության մուտքը չի թույլատրվի:

4.3.7 Կողմերին խորհուրդ է տրվում ազգային մակարդակով կամ Ձկնորսության ոլորտը ղեկավարող տարածաշրջանային կազմակերպությունների (ՁՂՏԿ) և համապատասխան միջազգային կազմակերպությունների շրջանակներում անհապաղ համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ նվազագույնի հասցնելու ձկնորսության<sup>5</sup> ազդեցությունը միգրացվող ջրային թռչունների վրա, և հնարավորության դեպքում համագործակցել այդ շրջանակներում՝ նվազեցնելու մահացությունը ազգային իրավագործության ներքո կամ դրանից դուրս գտնվող վայրերում. համապատասխան միջոցները պետք է մասնավորապես ուղղված լինեն ոչ կանխամտածված սպանության և ձկնարտադրության սարքավորումներով, այդ թվում՝ ձկնորսական ցանցերով, կարթապարանով, ուռկանապարկով ձկնորսության դեմ:

4.3.8. Կողմերին նաև խորհուրդ է տրվում ազգային մակարդակով կամ Ձկնորսության ոլորտը ղեկավարող տարածաշրջանային կազմակերպությունների (ՁՂՏԿ) և համապատասխան միջազգային կազմակերպությունների շրջանակներում անհապաղ համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ նվազագույնի հասցնելու ձկնորսության ազդեցությունը միգրացվող ջրային թռչունների վրա, որը տեղի է ունենում անկայուն ձկնորսության հետևանքով, որն էլ իր հերթին հանգեցնում է միգրացվող ջրային թռչունների կերակրի աղբյուրների սպառմանը:

4.3.9. Կողմերը պետք է ստեղծեն և արդյունավետորեն իրականացնեն շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքարի՝ օրենքով նախատեսված ստուգման մեխանիզմներ՝ մասնավորապես նավթի արտահոսքին, պինդ թափոնների բեռնաթափմանն ու արտանետմանն առնչվող միջազգային նորմերին և իրավական համաձայնագրերին համապատասխան՝ նպատակ ունենալով նվազեցնել դրանց ազդեցությունը Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների վրա:

4.3.10. Կողմերը պետք է անհրաժեշտ միջոցներ ստեղծեն, որպեսզի, իդեալական պայմաններում, վերացնեն, իսկ այլ դեպքերում՝ մեղմացնեն կղզիներում և կղզյակներում միգրացվող ջրային թռչունների բազմացմանը՝ այլ տարածքներում բնակվող ցամաքային գիշատիչներից սպառնացող վտանգը: Նշված միջոցները պետք է վերաբերեն անկանխատեսելի հանգամանքներում պլանավորմանը՝ կանխելու ներթափանցումը, արտակարգ իրավիճակներում օգնությանը՝ ներթափանցող գիշատիչներից ազատվելու համար, ինչպես նաև այն կղզիների

վերականգնմանն առնչվող ծրագրերին, որտեղ գիշատիչների պոպուլյացիաներն արդեն ստեղծվել են:

4.3.11. Կողմերին խորհուրդ է տրվում սահմանել համապատասխան միջոցներ՝ պայքարելու միգրացվող ջրային թռչուններին՝ ջրային կուլտուրաներից սպառնացող վտանգների դեմ, այդ թվում՝ ջրային կենդանիների համար էական համարվող խոնավ տարածքներին սպառնացող հանգամանքների բնապահպանական գնահատումները, հատկապես երբ գործ ունենք նոր կառույցների կամ գոյություն ունեցող կառույցների ընդլայնման հետ, ինչպես նաև ընդգրկելով այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ շրջակա միջավայրի աղտոտումը (օրինակ՝ ջրային կուլտուրաներում դեղերի մշակման արդյունքում առաջացած թափոններից կամ էվտրոֆիկացիայից), կենսավայրի կորուստը, լարափակոցներում խճճվելու վտանգը, այլ տարածքներում բնակվող կամ ինվազիվ տեսակների ներթափանցումը:

## 5. Հետազոտությունը և մոնիտորինգը

5.1. Կողմերը պետք է ձգտեն իրականացնել ուսումնասիրություններ այնպիսի ոչ բավականաչափ հայտնի տարածքներում, որտեղ կարող են առաջանալ Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների էական կուտակումներ: Նման ուսումնասիրությունների արդյունքները պետք է լայնորեն տարածվեն:

5.2. Կողմերը պետք է ձգտեն մոնիտորինգ իրականացնել Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաները: Նման մոնիտորինգի արդյունքները պետք է հրապարակվեն կամ ուղարկվեն համապատասխան միջազգային կազմակերպություններին՝ պոպուլյացիաների կարգավիճակը և դրանց թվի փոփոխության միտումները վերահսկելու հնարավորություն տալու համար:

5.3. Կողմերը պետք է համագործակցեն՝ գնահատելու նպատակով թռչունների պոպուլյացիաների թվաքանակի փոփոխման միտումները՝ որպես չափորոշիչ այդպիսի պոպուլյացիաների կարգավիճակի նկարագրման համար:

5.4. Կողմերը պետք է համագործակցեն, որպեսզի որոշեն Աղյուսակ 1-ում թվարկված բոլոր պոպուլյացիաների միգրացիոն ուղիները՝ օգտագործելով բազմացման և ոչ բազմացման սեզոնների բաշխվածության և հաշվառման արդյունքների վերաբերյալ առկա գիտելիքները և մասնակցելով միասնական օղակավորման ծրագրերին:

5.5. Կողմերը պետք է ձգտեն նախաձեռնել և օժանդակել էկոլոգիայի և Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների դինամիկայի հետազոտման համատեղ ծրագրերին՝ նպատակ ունենալով որոշելու դրանց առանձնահատուկ կարիքները,

ինչպես նաև դրանց պահպանության և կառավարման առավել նպատակահարմար մեթոդները:

5.6. Կողմերը պետք է ձգտեն ձեռնարկել Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների կողմից օգտագործվող խոնավ տարածքների տարողության, ինչպես նաև այդ պոպուլյացիաների միգրացիայի բնույթի վրա խոնավ տարածքների կորուստի և վատթարացման ու անհանգստության ազդեցության հետազոտություններ:

5.7. Կողմերը պետք է ձգտեն ձեռնարկել Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների վրա որսի և առևտրի ազդեցության, ինչպես նաև տեղական և ազգային տնտեսության համար այդ օգտագործման ձևերի անհրաժեշտության վերաբերյալ ուսումնասիրություններ:

5.8. Կողմերը պետք է ձգտեն համագործակցել համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ և օժանդակել հետազոտության ու մոնիտորինգի ծրագրերին:

## 6. Ուսուցում և տեղեկատվություն

6.1. Կողմերը պետք է, անհրաժեշտության դեպքում, ուսումնական ծրագրեր կազմակերպեն, որպեսզի համոզվեն, որ այս Գործողությունների ծրագիրը իրականացնող անձնակազմը համապատասխան գիտելիքներ ունի այն արդյունավետ իրականացնելու համար:

6.2. Կողմերը պետք է համագործակցեն միմյանց և Համաձայնագրի քարտուղարության հետ՝ նպատակ ունենալով մշակել ուսումնական ծրագրեր և փոխանակել ուսումնական նյութեր:

6.3. Կողմերը պետք է ձգտեն հասարակության իրազեկության մակարդակը բարձրացնելու համար մշակել Գործողության ծրագրի նպատակները, դրույթները և բովանդակությունը պարզաբանող ծրագրեր, տեղեկատվական նյութեր և մեխանիզմներ: Այդ իմաստով հատուկ ուշադրություն պետք է դարձվի կարևոր խոնավ տարածքներում և դրանց շուրջը բնակվող մարդկանց, այդ խոնավ տարածքների օգտագործողներին (որսորդներ, ձկնորսներ, տուրիստներ և այլն), ինչպես նաև տեղական կառավարման մարմիններին և այլ որոշում կայացնողներին:

6.4. Կողմերը պետք է ձգտեն իրականացնել հասարակության իրազեկության բարձրացմանն ուղղված հատուկ քարոզչական արշավներ՝ Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների պահպանության համար:

## 7. Իրականացումը

7.1. Այս Գործողության ծրագիրն իրականացնելիս Կողմերը պետք է, անհրաժեշտության դեպքում, առաջնահերթություն տան Աղյուսակ 1-ի Ա սյունակում թվարկված պոպուլյացիաներին:

7.2. Այն դեպքերում, երբ Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաներից Կողմի տարածքում նույն տեսակի երկուսից ավելի պոպուլյացիաներ են հանդիպում, այդ Կողմը պետք է ձեռնարկի պահպանության այնպիսի միջոցներ, որոնք համապատասխանում են ամենաթույլ պահպանություն ունեցող պոպուլյացիային կամ պոպուլյացիաներին:

7.3. Համաձայնագրի քարտուղարությունը պետք է, Տեխնիկական կոմիտեի հետ համագործակցությամբ և տարածաշրջանի պետությունների մասնագետների օգնությամբ, համակարգի սույն Համաձայնագրի IV հոդվածի 4-րդ կետի համապատասխան պահպանության ուղեցույցի մշակումը՝ այս Գործողության ծրագրի իրականացման հարցում Կողմերին օժանդակելու նպատակով: Համաձայնագրի քարտուղարությունը պետք է, հնարավորության դեպքում, ապահովի կապն այլ միջազգային փաստաթղթերի ներքո սահմանված ուղեցույցների հետ: Այս պահպանության ուղեցույցները պետք է նպատակ ունենան ներմուծելու կայուն օգտագործման սկզբունքները: Դրանք, ի թիվս այլ հարցերի, պետք է ներառեն.

- ա) եզակի տեսակների մասով գործողության ծրագրեր,
- բ) միջոցառումներ արտակարգ իրավիճակներում,
- գ) տարածքների գույքագրման և բնակավայրերի կառավարման մեթոդների նախապատրաստում,
- դ) որսորդության գործելակերպ,
- ե) ջրային թռչունների առևտուր,
- զ) տուրիզմ,
- է) ցանքերին հասցվող վնասի նվազեցում և
- ը) ջրային թռչունների մոնիտորինգի արձանագրություն:

7.4. Համաձայնագրի քարտուղարությունը պետք է, համագործակցելով Տեխնիկական կոմիտեի և Կողմերի հետ, պատրաստի այս Գործողության ծրագրի իրականացմանը անհրաժեշտ միջազգային ամփոփագրերի շարք՝ ներառյալ

- ա) հաշվետվություններ պոպուլյացիաների կարգավիճակի և դրանց թվաքանակի փոփոխման միտումների մասին,
- բ) բացեր ուսումնասիրություններից ստացվող տեղեկատվության մեջ,

- գ) յուրաքանչյուր պոպուլյացիայի կողմից օգտագործվող տարածքների ցանցերի, այդ թվում՝ յուրաքանչյուր տարածքի պահպանման կարգավիճակի, ինչպես նաև յուրաքանչյուր դեպքում ձեռնարկված կառավարման միջոցառումների ամփոփագրեր,
- դ) սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածում թվարկված տեսակների որսին և առևտրին վերաբերող յուրաքանչյուր երկրի օրենսդրությունը,
- ե) եզակի տեսակների մասով գործողությունների ծրագրի նախապատրաստման և իրականացման փուլը,
- զ) վերականգնման ծրագրեր, և
- է) այլ տարածքներում բնակվող ջրային թռչունների և դրանց խառնածնունդների վիճակը:

7.5. Համաձայնագրի քարտուղարությունը պետք է ձգտի ապահովել 7.4. կետում նշված ամփոփագրերի լրամշակումը հետևյալ ժամանակահատվածներում՝

- ա) Կողմերի ժողովի յուրաքանչյուր նստաշրջանին, բ) Կողմերի ժողովի յուրաքանչյուր երկրորդ նստաշրջանին, գ) Կողմերի ժողովի յուրաքանչյուր երկրորդ նստաշրջանին, դ) Կողմերի ժողովի յուրաքանչյուր երրորդ նստաշրջանին, ե) Կողմերի ժողովի յուրաքանչյուր երկրորդ նստաշրջանին, զ) Կողմերի ժողովի յուրաքանչյուր երրորդ նստաշրջանին, է) Կողմերի ժողովի յուրաքանչյուր երկրորդ նստաշրջանին:

7.6. Տեխնիկական կոմիտեն պետք է գնահատի 7.3. և 7.4. կետերի ներքո նախապատրաստված ուղեցույցները և ամփոփագրերը, և ձևակերպի դրանց մշակմանը, բովանդակությանը և իրականացմանը վերաբերող հանձնարարականների և բանաձևերի նախագծերը՝ Կողմերի ժողովի նիստերի ընթացքում քննարկման համար:

7.7. Համաձայնագրի քարտուղարությունը պետք է կանոնավոր կերպով ձեռնարկի այս Գործողության ծրագրի իրականացման համար լրացուցիչ միջոցներ (դրամական և տեխնիկական օգնություն) հայթայթող հնարավոր մեխանիզմների ամփոփումներ և զեկույցով հանդես գա Կողմերի ժողովի յուրաքանչյուր հերթական նիստի ընթացքում:

Աղյուսակ 1. Միգրացվող ջրային թռչունների պոպուլյացիաների կարգավիճակը

#### ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Աղյուսակ 1-ի հետևյալ սկզբունքներն են հանդիսանում Գործողությունների ծրագրի իրականացման հիմքը

#### Սյունակ Ա

##### Կարգ 1.

- ա) Կոնվենցիայի 1-ին հավելվածում ներառված տեսակները.
- բ) Բնության և բնական ռեսուրսների պահպանության միջազգային միության (IUCN) վտանգված կենդանիների Կարմիր գրքում (Groombridge 1993) որպես վտանգված թվարկված տեսակները, կամ
- գ) Պոպուլյացիաներ, որոնց թիվը 10000 առանձնյակներից պակաս է:

Կարգ 2. Պոպուլյացիաներ, որոնց թիվը 10000 և 25000 առանձնյակների միջև է:

Կարգ 3. Պոպուլյացիաներ, որոնց թիվը 25000 և 100000 առանձնյակների միջև է և համարվում են վտանգված քանի որ՝

- ա) տարեկան կյանքի ցիկլի որևէ փուլում կուտակվում են փոքրաթիվ տարածքներում,
- բ) կախում ունեն լրջորեն վտանգված բնակավայրի տեսակից,
- գ) դրսևորում են քանակի երկարատև նվազեցում, կամ
- դ) ցուցաբերում են պոպուլյացիայի թվաքանակի ծայրահեղ տատանումներ կամ դրա թվաքանակի փոփոխման միտումներ:

#### Սյունակ Բ

Կարգ 1. Պոպուլյացիաներ, որոնց թիվը 25000 և 100000 առանձնյակների միջև է, և որոնք Ա սյունակի մասով չեն բավարարում վերը նկարագրված պայմանները.

Կարգ 2. Պոպուլյացիաներ, որոնց թիվը 100000 առանձնյակներից բարձր է և համարվում են հատուկ ուշադրության կարիք ունեցող, քանի որ

- ա) տարեկան կյանքի ցիկլի որևէ փուլում կուտակվում են փոքրաթիվ տարածքներում.
- բ) կախում ունեն լրջորեն վտանգված բնակավայրի տեսակից.
- գ) դրսևորում են քանակի երկարատև նվազեցում, կամ
- դ) ցուցաբերում են պոպուլյացիայի թվաքանակի ծայրահեղ տատանումներ կամ դրա թվաքանակի փոփոխման միտումներ:

#### Սյունակ Գ

Կարգ 1. Պոպուլյացիաներ, որոնց թիվը 100000 առանձնյակներից բարձր է և որոնք կարող են նշանակալիորեն շահել միջազգային համագործակցությունից և որոնք չեն համապատասխանում Ա սյունակում և Բ սյունակում՝ վերը նկարագրված պայմաններին:

## Աղյուսակ 1-ի ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

Այս Աղյուսակը պետք է՝

- ա) պարբերաբար վերանայվի Տեխնիկական կոմիտեի կողմից սույն Համաձայնագրի VII հոդվածի 3(բ) կետին համապատասխան, և
- բ) փոփոխվի, Կողմերի ժողովի կողմից անհրաժեշտ համարվելու դեպքում, սույն Պայմանագրի VI հոդվածի 9(դ) կետին համապատասխան, այդպիսի վերանայումների եզրակացությունների լույսի ներքո:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ  
ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

<http://wow.wetlands.org/informationflyway/criticalsitenetworktool/tabid/1349/language/en-US/Default.aspx>

### **Հյուսիսային Աֆրիկա**

Ալժիր, Եգիպտոս, Լիվիական Արաբական  
Ջամահիրիա, Մարոկկո, Թունիս  
Բենին, Բուրկինա Ֆասո, Կամերուն, Կաբո  
Վերդե, Չադ, Կոդ Դիվուար,  
Գամբիա, Գանա, Գվինեա, Գվինեա-Բիսաու,  
Լիբերիա, Մալի, Մավրիտանիա, Նիգեր,  
Նիգերիա, Սենեգալ, Սիերա Լեոնե, Տոգո

### **Արևելյան Աֆրիկա**

Բուրունդիա, Զիբութի, Էրիտրեա, Եթովպիա,  
Քենիա, Ռուանդա, Սոմալի, Սուդան,  
Ուգանդա, Տանզանիայի Միացյալ  
Հանրապետություն.

### **Հյուսիս-արևմտյան Աֆրիկա Հյուսիս-արևելյան Աֆրիկա**

Մարոկկո, Ալժիր և Թունիս  
Զիբութի, Եգիպտոս, Էրիտրեա, Եթովպիա,  
Սոմալի, Սուդան.



**Հարավային Աֆրիկա**

Անգոլա, Բոտսվանա, Լեսոտո, Մալավի, Մոզամբիկ, Նամիբիա, Հարավ. Աֆրիկյան Հանրապետություն, Սվազիլենդ, Զամբիա, Զիմբաբվե.

**Կենտրոնական Աֆրիկա**

Կամերուն, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն, Կոնգո, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, Հասարակածային Գվինեա, Գաբոն, Սան Տոմե և Պրինսիպի.

**Սահարյան Աֆրիկա**

Սահարայից հարավ գտնվող բոլոր Աֆրիկյան պետությունները

**Արևադարձային Աֆրիկա**

Սահարյան Աֆրիկյան առանց Լեսոտոյի, Նամիբիայի, Հարավային Աֆրիկա և Սվազիլենդ

**Արևմտյան Պալեարկտիկա**

ինչպես սահմանված է “Եվրոպայի, Մերձավոր Արևելքի եւ Հյուսիսային Աֆրիկայի Թռչուններ” ձեռնարկում (Cramp & Simmons 1977).

**Հյուսիս- արևմտյան Եվրոպա**

Բելգիա, Դանիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իսլանդիա, Իռլանդիա, Լյուքսեմբուրգ, Հոլանդիա, Նորվեգիա, Շվեդիա, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն և Հյուսիսային Իռլանդիա.

**Արևմտյան Եվրոպա**

Հյուսիս-արևմտյան Եվրոպա, Պորտուգալիա և Իսպանիա

**Հյուսիս- արևելյան Եվրոպա**

Ռուսաստանի Դաշնության հյուսիսային մասը՝ Ուռալից արևմուտք

**Հյուսիսային Եվրոպա**

Հյուսիս- արևմտյան Եվրոպա և Հյուսիս-արևելյան Եվրոպա, ինչպես սահմանված է վերևում

**Արևելյան Եվրոպա**

Բելառուս, Ռուսաստանի Դաշնություն Ուռալից արևմուտք, Ուկրաինա,

**Կենտրոնական Եվրոպա**

Ավստրիա, Չեխիա, Էստոնիա, Գերմանիա, Հունգարիա, Լատվիա, Լիխտենշտեյն, Լիտվա, Լեհաստան, Ռուսաստանի Դաշնություն Ֆինլանդիայի եւ

**Հարավ-արևմտյան Եվրոպա**

**Հարավ- արևելյան Եվրոպա**

**Հարավային Եվրոպա**

**Հյուսիսային արլանդյան օվկիանոս**

**Արևելյան արլանդյան օվկիանոս**

**Արևմտյան Սիբիր**

**Արևմտյան Միջերկրական ծով**

**Արևելյան Միջերկրական ծով**

Կալինինգրադի ծոցի շուրջ, Սլովակիա, Շվեյցարիա.

Ֆրանսիա, Իտալիա, Մալթա, Մոնակո, Պորտուգալիա, Սան Մարինո, Իսպանիա Ալբանիա, Հայաստան, Բոսնիա եւ Հերցեգովինա, Բուլղարիա, Խորվաթիա, Կիպրոս, Վրաստան, Հունաստան, ՆՀՀ Մակեդոնիա, Մոլդովա, Մոնտենեգրո, Ռումինիա, Սերբիա, Սլովենիա և Թուրքիա. Հարավ –արևմտյան Եվրոպա և հարավ-արևելյան Եվրոպա, ինչպես սահմանված է վերևում.

Ֆարերյան կղզիներ, Գրենլանդիա, Իսլանդիա, Իռլանդիա, Նորվեգիա, Ռուսաստանի Դաշնության հյուսիս - արևմտյան ափ, Սվաբարդ, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն, Հյուսիսային Իռլանդիա

Եվրոպայի և հյուսիսային Եվրոպայի առլանդյան ափ՝ հյուսիսային Նորվեգիայից Մարոկկո.

Ռուսաստանի Դաշնությունը Ուռալից արևելք մինչև Ենիսեյ գետը եւ հարավ մինչև Ղազախստանի սահմանը.

Ալժիր, Ֆրանսիա, Իտալիա, Մալթա, Մոնակո, Մարոկկո, Պորտուգալիա, Սան Մարինո, Իսպանիա, Թունիս.

Ալբանիա, Բոսնիա եւ Հերցեգովինա, Խորվաթիա, Կիպրոս, Եգիպտոս, Հունաստան, Իսրայել, Լիբանան, Մոնտենեգրո, Սերբիա, Սլովենիա, Սիրիայի Արաբական Հանրապետության, նախկին Հարավսլավիայի Հանրապետություն Մակեդոնիա, Թուրքիա.

**Սև ծով**

Հայաստան, Բուլղարիա, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն, Ռումինիա, Ռուսաստանի Դաշնություն, Թուրքիա, Ուկրաինա.

**Կասպից ծով**

Ադրբեջան, Իրանի Իսլամական Հանրապետություն, Ղազախստան, Հարավ-արևմտյան Ռուսաստան, Թուրքմենստան, Ուզբեկստան.

**Հարավ-արևմտյան Ասիա**

Բահրեյն, Իրաք, Իրանի Իսլամական Հանրապետություն, Իսրայել, Հորդանան, Ղազախստան, Քուվեյթ, Լիբանան, Աման, Կատար, Սաուդյան Արաբիա, Սիրիայի Արաբական Հանրապետություն, արեւելյան Թուրքիա, Թուրքմենստան, Արաբական Միացյալ Էմիրություններ, Ուզբեկստան, Եմեն.

**Ծովածոց**

Պարսից ծոց, Օմանի ծոցև Արաբական ծով՝ Ադենի ծոցից արևմուտք.

**Արևմտյան Ասիա**

Ռուստատանի Դաշնության արևմտյան շրջանները՝ մինչ Ուռալյան լեռներ և Կասպից ծովի երկրները.

**Կենտրոնական Ասիա**

Աֆղանստան, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան

.

**Հարավային Ասիա**

Բանգլադեշ, Բուտան, Հնդկաստան, Մալդիվներ, Նեպալ, Պակիստան, Շրի Լանկա

**Հնդկական օվկիանոս**

Կոմորոս, Մադագասկար, Սեյշելներ.

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆՇԱՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ

bre. բազմացող

win. ձմեռող

N. հյուսիսային

E. արևելյան

S. հարավային

W. արևմտյան

NE. հյուսիս-արևելյան

NW. հյուսիս-արևմտյան

SE. հարավ-արևելյան

SW. հարավ-արևմտյան

( ): պոպուլյացիայի վիճակը անհայտ է: Պահպանության վիճակը գնահատված:

\*: (տես. Համաձայնագրի 3-րդ հավելվածի 2.1.1 պարբերությունը):

## ՆՇՈՒՄՆԵՐ

1. Աղյուսակ 1-ի լրացման համար օգտագործված պոպուլյացիաների տվյալները համապատասխանում են, որքանով որ դա հնարավոր է, Համաձայնագրի տարածաշրջանում պոտենցիալ բազմացող պաշարների առանձնյակների թվին: Կարգավիճակը հիմնվում է պոպուլյացիաների գնահատման՝ հրապարակված լավագույն տվյալների վրա:

2. Թվարկված պոպուլյացիաների (bre) կամ (win) նախաձանցները զուտ պոպուլյացիաների նույնականացմանն օգնելու համար են: Դրանք չեն մատնանշում գործողությունների նկատմամբ սեզոնային սահմանափակումները Համաձայնագրի և Գործողությունների ծրագրի ներքո այդ պոպուլյացիաների մասով:

3. Պոպուլյացիաների նույնականացման համար օգտագործվող հակիրճ նկարագրությունները հիմնված են Ջրային թռչունների պոպուլյացիայի գնահատականներ աշխատության չորրորդ հրատարակությունում և Աշխարհի թռչունների դասագիրք աշխատությունում օգտագործված նկարագրությունների վրա:

4. (/) նշանն օգտագործվում է առանձնացնելու բազմանալու շրջանները ձմեռելու շրջաններից:

5. Այնտեղ, որտեղ որոշակի տեսակի պոպուլյացիան թվարկված է Աղյուսակ 1-ում մի քանի դասակարգմամբ, Գործողությունների ծրագրի մասով պարտավորությունները վերաբերում են թվարկված ամենախիստ կարգին:

	A	B	C
<b>SPHENISCIDAE</b>			
<i>Spenicus demercus</i> Աֆրիկյան պինգվին			
-Հարավային Աֆրիկա	1b	2a2c	
<b>GAVIIDAE</b>			
<i>Gavia stellata</i> Կարմրախածի սուզաբաղ			
- Հյուսիս-արևմտյան Եվրոպա (win)		2c	
- Կասպիս լիճ, Սև ծով և արևելյան Միջերկրական ծով (win)		(1)	
<i>Gavia arctica arctica</i> Սևխածի սուզաբաղ			
- Հյուսիսային Եվրոպա և Արևմտյան Սիբիր/ Եվրոպա		2c	
<i>Gavia arctica suschkini</i>			
- Կենտրոնական Սիբիր/ Կասպից ծով			(1)
<i>Gavia immer</i> Սովորական սուզաբաղ			
- Եվրոպա (win)	1c		
<i>Gavia adamsii</i> Սպիտակակտուց սուզաբաղ			
- Հյուսիսային Եվրոպա (win)	1c		
<b>PODICIPEDIDAE</b>			
<i>Tachybaptus ruficollis ruficollis</i> Փոքր սուզակ			
-Եվրոպա և Հյուսիս-արևմտյան Աֆրիկա			1
<i>Podiceps cristatus cristatus</i> Մեծ սուզակ			
-Հյուսիս-արևմտյան և արևմտյան Եվրոպա		2c	
- Սև ծով և Միջերկրական ծով (win)		2c	
- Կասպից ծով և հարավ-արևմտյան(win)	2		
<i>Podiceps grisegena grisegena</i> Մոխրայտ սուզակ			
- Հյուսիս-արևմտյան Եվրոպա (win)	3c		
- Սև ծով և Միջերկրական ծով (win)	3c		
- Կասպից ծով(win)	2		
<i>Podiceps auritus auritus</i> Կարմրավիզ սուզակ			
- Հյուսիս-արևմտյան Եվրոպա (մեծակտուց)	1c		
- Հյուսիս-արևելյան Եվրոպա (փոքրակտուց)	2		
- Կասպից ծով և հարավային Ասիա (win)	2		
<i>Podiceps nigricollis nigricollis</i> Սևավիզ սուզակ			
-Հարավային և արևմտյան Եվրոպա և հյուսիսային Աֆրիկա		2c	
-Արևմտյան Ասիա/ հարավ-արևմտյան և հարավային Ասիա		1	
<b>PELECANIDAE</b>			

<b><i>Pelecanus onocrotalus</i></b> Վարդագույն հավալուսն			
- Հարավային Աֆրիկա		1	
- Արևմտյան Աֆրիկա		1	
- Արևելյան Աֆրիկա			1
- Եվրոպա և Արևմտյան Ասիա (bre)	1a 3c		
<b><i>Pelecanus rufescens</i></b> Վարդագունամեջք հավալուսն			
Տրոպիկական Աֆրիկա և հարավ-արևմտյան Արաբիա		1	
<b><i>Pelecanus crispus</i></b> Գանգրափետուր հավալուսն			
- Սև ծով և Միջերկրական ծով (win)	1a 1c		
- Հարավ-արևմտյան Ասիա և հարավային Ասիա (win)	1a 1c		
<b>SULIDAE</b>			
<b><i>Morus capensis</i></b> Հարավաֆրիկյան գանեթ	1b	2a 2c	
- Հարավային Աֆրիկա			
<b>PHALACROCORACIDAE</b>			
<b><i>Phalacrocorax coronatus</i></b> Պսակավոր ձկնկուլ			
Առափնյա հարավ-արևմտյան Աֆրիկա	1c		
<b><i>Phalacrocorax pygmeus</i></b> Փոքր ձկնկուլ			
- Սև ծով և Միջերկրական ծով		1	
- Հարավ-արևմտյան Ասիա		1	
<b><i>Phalacrocorax neglectus</i></b> Գետափնյա ձկնկուլ			
Առափնյա հարավ-արևմտյան Աֆրիկա	1b 2		
<b><i>Phalacrocorax carbo</i></b> Մեծ ձկնկուլ			
Հյուսիս-արևմտյան Եվրոպա			1
<b><i>Phalacrocorax carbo lucidus</i></b>			
- Առափնյա արևմտյան Աֆրիկա		1	
- Կենտրոնական արևելյան Աֆրիկա			1
- Առափնյա հարավային Աֆրիկա	2		
<b><i>Phalacrocorax nigrogularis</i></b> Սոկոտրյան ձկնկուլ			
- Արաբական ծովի ափ	1b	2a 2c	
- Ադենի ծոց, Սոկոտա լղզիներ, Արաբական ծով	1b	1	
<b><i>Phalacrocorax capensis</i></b> Հարավաֆրիկյան ձկնկուլ			
Առափնյա Հարավային Աֆրիկա		2a 2c	
<b>FREGATIDAE</b>			
<b><i>Fregata minor aldabrensis</i></b>			
Արևմտյան Հնդկական օվկիանոս	1c		

<b><i>Fregata iredalei</i></b>			
Արևմտյան Հնդկական օվկիանոս	1c		
<b>ARDEIDAE</b>			
<b><i>Egretta ardesiaca</i></b> Սև տառեղ			
Մերձսահարյան Աֆրիկա		1	
<b><i>Egretta vinaceigula</i></b> Շերթաքարագույն տառեղ			
- Հարավային կենտրոնական Աֆրիկա	1b 1c		
<b><i>Egretta garzetta</i></b> Սպիտակ փոքր տառեղ			
Մերձսահարյան Աֆրիկա			(1)
Արևմտյան Եվրոպա, Հյուսիս-Արևմտյան Աֆրիկա			1
Կենտրոնական և արևելյան Եվրոպա, Սև ծով, արևելյան Միջերկրական ծով		1	
Արևմտյան Ասիա/Հարավ-Արևմտյան Ասիա, հյուսիս-արևելյան և արևելյան Աֆրիկա		(1)	
<b><i>Egretta gularis gularis</i></b> Արևմտյան խուլթային տառեղ			
Արևմտյան Աֆրիկա		(1)	
<b><i>Egretta gularis schistacea</i></b>			
Հյուսիս-արևելյան Աֆրիկա, Կարմիր ծով		(1)	
Հարավ-արևմտյան Ասիա և հարավային Ասիա	2		
<b><i>Egretta dimorpha</i></b> Երկձև տառեղ			
Առափնյա արևելյան Աֆրիկա	2		
<b><i>Ardea cinerea cinerea</i></b> Մոխրագույն տառեղ			
Մերձսահարյան Աֆրիկա			1
Հյուսիսային և արևմտյան Եվրոպա			1
Կենտրոնական և արևելյան Եվրոպա			1
Արևմտյան և հարավ-արևմտյան Ասիա (bre)			(1)
<b><i>Ardea melanocephala</i></b> Սևագլուխ տառեղ			
Մերձսահարյան Աֆրիկա			(1)
<b><i>Ardea purpurea purpurea</i></b> Շիկակարմիր տառեղ			
-Տրոպիկական Աֆրիկա		1	
- Արևմտյան Եվրոպա և Արևմտյան Միջերկրական ծով/ արևմտյան Աֆրիկա	2		
- Արևելյան Եվրոպա և հարավ-արևմտյան Ասիա/ Մերձսահարյան Աֆրիկա		(2c)	
<b><i>Casmerodius albus albus</i></b> Սպիտակ մեծ տառեղ			
-Արևմտյան, կենտրոնական և հարավ-արևելյան Եվրոպա/ Սև ծով և		1	

Միջերկրական ծով			
- Արևմտյան Ասիա/ հարավ-արևմտյան Ասիա		(1)	
<b>Casmerodius albus melanorhynchos</b>			
Մերձսահարյան Աֆրիկա, Մադագասկար			(1)
<b>Mesophoyx intermedia brachyrhynca</b> Միջին տառեղ			
Մերձսահարյան Աֆրիկա		1	
<b>Bubulcus ibis ibis</b> Եգիպտական տառեղ			
-Հարավային Աֆրիկա			1
-Տրոպիկական Աֆրիկա			1
Հարավ-արևմտյան Եվրոպա			1
Հյուսիս-արևմտյան Աֆրիկա			1
-Արևելյան Միջերկրական ծով և հարավ-արևմտյան Ասիա		1	
<b>Ardeola ralloides ralloides</b> Դեղին տառեղ			
Հարավ-Արևմտյան Եվրոպա, Հյուսիս-Արևմտյան Աֆրիկա(bre)	1c		
Կենտրոնական և արևելյան Եվրոպա/ արևելյան Միջերկրական ծով (bre)		1	
Արևմտյան և Հյուսիս-Արևմտյան Ասիա/մերձսահարյան Աֆրիկա		(1)	
<b>Ardeola idae</b> Մադագասկարյան տառեղ			
- Մադագասկար և Ալդաբրա/կենտրոնական և արևելյան Աֆրիկա (bre)	1b1c		
<b>Ardeola rufiventris</b> Շիկակարմրափոր տառեղ			
- Տրոպիկական արևելյան և հարավային Աֆրիկա		(1)	
<b>Nycticorax nycticorax nycticorax</b> Կվակվա			
Մերձսահարյան Աֆրիկա և Մադագասկար			1
Արևմտյան Եվրոպա, հյուսիս-արևմտյան Աֆրիկա(bre)	3c		
Կենտրոնական և արևելյան Եվրոպա/Սև ծով, արևելյան Միջերկրական ծով		2c	
Արևմտյան Ասիա/հարավ-արևմտյան Ասիա և հյուսիս-արևմտյան Աֆրիկա		(1)	
<b>Ixobrychus minutus minutus</b> Փոքր ջրցուլ			
- Արևմտյան Եվրոպա, հյուսիս-արևմտյան Աֆրիկա/ մերձսահարյան Աֆրիկա	2		
- Կենտրոնական և արևելյան Եվրոպա/Սև ծով, արևելյան Միջերկրական ծով/ մերձսահարյան Աֆրիկա		2c	
- Արևմտյան և հարավ-արևմտյան Ասիա/ մերձսահարյան Աֆրիկա		(1)	
<b>Ixobrychus minutus payesii</b>			
-Մերձսահարյան Աֆրիկա		(1)	
<b>Ixobrychus sturmii</b> Թզուկ ջրցուլ			



- Մերձսահարյան Աֆրիկա		(1)	
<b><i>Botaurus stellaris stellaris</i></b> Մեծ ջրցուլ			
- Արևմտյան և հյուսիս-արևմտյան Աֆրիկա (bre)	1c		
- Կենտրոնական և արևելյան Եվրոպա/Սև ծով, արևելյան Միջերկրական ծով(bre)		2c	
-Հարավ-արևմտյան Ասիա		1	
<b><i>Botaurus stellaris capensis</i></b>			
-Հարավային Աֆրիկա	1c		
<b>CICONIIDAE</b>			
<b><i>Mycteria ibis</i></b> Դեղնակտուց արագիլ			
- մերձսահարյան Աֆրիկա/բացի Մադագասկարից/		1	
<b><i>Anastomus lamelligerus</i></b> Աֆրիկյան բերանբաց արագիլ			
- Մերձսահարյան Աֆրիկա			1
<b><i>Ciconia nigra</i></b> Սև արագիլ			
-Հարավային Աֆրիկա	1c		
-Հարավ-արևմտյան Եվրոպա/ արևմտյան Աֆրիկա	1c		
Կենտրոնական և արևելյան Եվրոպա/ արևմտյան Աֆրիկա (bre)	2		
<b><i>Ciconia abdimii</i></b> Աբդիմի արագիլ			
- Մերձսահարյան Աֆրիկա և հարավ-արևմտյան Արաբիա		(2c)	
<b><i>Ciconia episcopus microscelis</i></b> Բրդոտավիզ արագիլ			
- Մերձսահարյան Աֆրիկա		(1)	
<b><i>Ciconia ciconia ciconia</i></b> Սպիտակ արագիլ			
- Հարավային Աֆրիկա	1c		
- Իբերիա և հյուսիս-արևմտյան Աֆրիկա	3b		
- Կենտրոնական և արևելյան Եվրոպա/ մերձսահարյան Աֆրիկա			1
- Արևմտյան Ասիա/ հարավ-արևմտյան Ասիա	2		
<b><i>Leptoptilos crumeniferus</i></b> Մարաբու			
- Մերձսահարյան Աֆրիկա			1
<b>BALAENICIPITIDAE</b>			
<b><i>Balaeniceps rex</i></b> Կոշկակտուց արագիլ			
Կենտրոնական տրոպիկական Աֆրիկա	1c		
<b>THRESKIORNITHIDAE</b>			
<b><i>Plegadis falcinellus falcinellus</i></b> Քաջահավ			
- Մերձսահարյան Աֆրիկա (bre)			1
-Սև ծով, Միջերկրական ծով/ արևմտյան Աֆրիկա (bre)	3c		

-Հարավ-արևմտյան Ասիա/արևելյան Աֆրիկա		(1)	
<b>Geronticus eremita</b> Ճաղատ իբիս			
- Մարոկկո	1a 1b 1c		
- Հարավ-արևմտյան Ասիա	1a 1b 1c		
<b>Threskiornis aethiopicus aethiopicus</b> Սուրբ իբիս			
